ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 Թ. ՄԱՅԻՍԻ 21-ԻՑ 23-Ը ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Ք. ՀՌՈՄ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Խաչիկ Սողոմոնյան
Լիլիթ Սարոյան
Արայիկ Ստեփանյան

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Իտալիայի Հանրապետություն, ք. Հռոմ, 2024թ. մայիսի 21-ից 23-ը:

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Իտալիայի տրանսպորտի նախարարություն:

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Միջազգային փոխադրումների ոլորտում համագործակցության շրջանակում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) փոփոխություններ կատարել համար համատեղ հանձնաժողովի նիստին մասնակցելու, Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ոլորտի ազգային օրենսդրական կարգավորումների փորձի փոխանակման և նույնականացման, ինչպես նաև Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նախագծման և Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության ակադեմիայի «IRU» շրջանակում համագործակցության հարցերի քննարկում:

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Կողմերը փոխանակվեցին երկու երկրների միջև ապրանքաշրջանառության, առևտրի և ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությամբ, ըստ որի էականորեն աճել է Իտալիայի Հանրապետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն իրականացվող բեռնափոխադրումների քանակը, որի պատճառով առաջացել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու, մասնավորապես՝ երկու երկրների միջև առևտրաշրջանառության աճի հետ պայմանավորված՝ յուրաքանչյուր տարի փոխանակվող բեռնափոխադրումների

մեկանգամյա թույլտվությունների քանակի վերանայման անհրաժեշտություն: Քննարկվեցին Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպմանը խոչընդոտող հանդիսացող հանգամանքները, մասնավորապես՝ Իտալիայի Հանրապետություն մուտքի վիզային ռեժիմի դյուրացման խնդիրները: Քննարկվեցին բեռնափոխադրումների թույլտվությունները թվային միջավայրում (էլեկտրոնային եղանակով) տրամադրելու, բեռնափոխադրումների ընթացքում քարշակի համաձայնագրի կողմ հանդիսացող երկրում գրանցման պայմաններում՝ այլ երկրների գրանցում ունեցող կցորդիչների ճանաչման, Հայաստանի Հանրապետության կողմից տրանսպորտային միջոցներին տրամադրված՝ տեխնիկական զննության անցկացման փաստը հավաստող սերտիֆիկատի ճանաչման և երկու երկրների միջև բեռնափոխադրումների աճը խթանող այլ հարցեր և միջոցառումներ: Քննարկման թեմա հանդիսացավ Հայաստանի Հանրապետությունում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նախագծերի ՏՆԵԿ օրենսդրությանը համապատասխանեցման և նախագծերից բխող գործառույթներ գործնական կիրառման ընթացքում Իտալիայի համապատասխան մասնագետների ներգրվման հնարավորությունը մասնավորապես՝ վարորդների և տրանսպորտային մենեջերների ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպումների ընթացքում ելույթներ ունեցան Իտալիայի Հանրապետության Ենթակառուցվածքների և տրանսպորտի նախարարություն 7-րդ բաժնի (Միջազգային փոխադրումներ) տնօրեն Դոնաթելլա Օրլանդոն և ավագ սպաներ Կարլա Թալիսը, Նոեմի Վիտալեին և Անդրեա Դե Չեզարեն, նույն նախարարության 6-րդ բաժնի (Ազգային և միջազգային ուղևորափոխադրումներ) տնօրեն Սալվատորե Նապոլին և ավագ սպա Ստեֆանիա Սպինան մաքսային վարչության ավագ սպա Մարկո Չիամպին և պաշտոնատար այլ անձինք:

Հայյաստանի Հանրապետության պատվիրակության առաջարկով քննարկվեցին վարորդներին և տրանսպորտային միջոցներին տրամադրված մասնագիտական իրավասության վկայականների և համապատասխանության սերտիֆիկատների փոխադարձ ճանաչման հարցերը, մասնավորապես՝ միջազգային փոխադրումներում ներգրավված Հայաստանյան տրանսպորտային միջոցների տեխնիկական համապատասխանության փաստաթղթերի ECMT-ի և ԵՄ կանոնների պահանջներին համապատասխանությունը: Պարզաբանվեցին Իտալիայի կողմից ՏՆԵԿ թույլտվությունների տրամադրման ընթացակարգը և բաշխման գործընթացում կիրառվող չափանիշները: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում ընթացքի մեջ է Որակի Խարտիայից բխող ազգային

օրենսդրական իրավական ակտերի նախագծերի ընդունման գործընթացը՝ քննարկման թեմա հանդիսացավ Հայաստանի Հանրապետությունում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նախագծերի ՏՆԵԿ օրենսդրությանը համապատասխանեցման և նախագծերից բխող գործառույթներ գործնական կիրառման ընթացքում Իտալիայի համապատասխան մասնագետների ներգրվման հնարավորությունը մասնավորապես՝ վարորդների և տրանսպորտային մենեջերների ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման արդյունքում 2024 թվականի մայիսի 22-ին Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև ստորագրվեց ավտոմոբիլային տրանսպորտի մասին համատեղ (խառը) հանձնաժողովի արձանագրություն:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նկատմամբ իտալական կողմի փորձագիտական աջակցության, Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության ակադեմիայի «IRU» շրջանակում Հայաստանի և Իտալիայի հանրապետությունների ներկայացուցիչների համագործակցության, միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների մենեջերների և վարորդների ուսուցման ծրագրերի մշակման, ուսումնական կենտրոնների արտադրական բազայի կահավորման, քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգերի մշակման և համապատասխան մասնագետների վերապատրաստման շրջանակում Իտալիայի Հանրապետության Ենթակառուցվածքների և տրանսպորտի նախարարություն 7-րդ բաժնի (Միջազգային փոխադրումներ) հետ համագործակցության վերաբերյալ:

Միաժամանակ կողմերը պայմանավորվեցին Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև ամենամյա փոխանակվող թույլտվությունները թվային միջավայրում (էլեկտրոնային) իրականացնելու համար էլեկտրոնային համակարգի ստեղծման աշխատանքներ նախաձեռնելու մասին:

8.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման արդյունքում 2024 թվականի մայիսի 22-ին Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև ստորագրված ավտոմոբիլային տրանսպորտի մասին համատեղ (խառը) հանձնաժողովի արձանագրության արդյունքում երկու երկրների միջև բեռնափոխադրումների աճը

խթանելու նպատակով կողմերի միջև սահմանվեցին միջազգային բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվությունների փոխանակման նոր քվոտաներ: 2025 թվականի համար կողմերը փոխանակվելու են թվով 600 թույլտվություններ՝ նախկին 300-ի փոխարեն:

Ակնկալվում է շարունակել Իտալիայի Հանրապետության Ենթակառուցվածքների և տրանսպորտի նախարարություն 7-րդ բաժնի (Միջազգային փոխադրումներ) փորձի ուսումնասիրությունը, առցանց եղանակով մինչև 2024 թվականի երրորդ եռամսյակը ավարտել ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող իրավական ակտերի մշակման և հաստատման, ինչպես նաև միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների վարորդների և մենեջերների ուսուցման ուսումնական կենտրոնների կազմավորման գործընթացը՝ կիրառելով իտալական կողմի փորձը և մասնագիտական հմտությունները:

Իտալիայի Հանրապետությունում գործուղման ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը սեփական նախաձեռնությամբ կազմակերպչական աջակցություն ցուցաբերեց Իտալիայում հայ ուսանող Ռուզաննա Պետրոսյանը, ինչն անչափ կարևոր էր այցի համար:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությանից օտարերկրյա գործուղումների ընթացքում տվյալ երկրում հայ ուսանողների ներուժի օգտագործումը էականորեն բարձրացնում է գործուղումների արդյունավետությունը և ապահովում եվրոպական կրթություն ստացած հայ մասնագետների մշտական կապը պետական կառավարման մարմինների հետ:

<u>9.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ</u>

27.05.2024թ.

Խաչիկ Սողոմոնյան

Լիլիթ Սարոյան

Արայիկ Ստեփանյան